

nia Širakac'i lui sont familières. Il avait lui-même inclus dans son programme d'enseignement les « quatre arts » (mathématiques, géométrie, astronomie, musique), et révèle une connaissance profonde de la structure des instruments à corde de son époque et de leurs accords.

Soucieux de la décence et du bon ordre dans la célébration de l'office divin et dans la psalmodie, Sarkawag introduit quelques modifications dans la liturgie au couvent de Hałbat dont il était le supérieur; il faisait même des recherches textuelles pour arriver à une interprétation plus fidèle des modulations de la psalmodie et des mélodies.

Dans la première partie de son étude, l'A. met en lumière la veine créatrice de Sarkawag, d'abord par l'analyse de son « Livre de Prières » (*Ałot'amatean*); Alishan voyait dans cette œuvre de Sarkawag, à côté de celles de St. Grégoire de Narek, l'une des principales sources d'inspiration de St. Nersēs Šnorhali. L'A. s'arrête notamment sur une « Lamentation » (*Ołb*) et une « Ode de la Résurrection » (*Tał Yarut'ean*) dont les textes sont notés en neumes arméniens dans certains manuscrits.

Parmi les hymnes, l'A. attribue à Sarkawag, en dehors du *Hambarji* (hymne des Vêpres) bien connu des Sts. Lewondeank' (*Paycarac'an aysôr surb eketec'ik'*), l'hymne acrostiche des Sts. Vardanank' (*Ančareli Band Astuac*), de même que l'hymne qui commence par les mots *Anskizbn Bann Astuac*; ce dernier est ensuite passé comme Hambarji dans le canon des Saintes Hrip'simeank.

L'A. analyse en dernier lieu l'hymne *Ant'ařam siroy cnundk'*, également dédié aux Sts. Vardanank', qui a plusieurs traits de ressemblance avec le poème *Sarek*, et qui, malheureusement, a été ensuite laissé hors de l'hymnaire comme non canonique.

ՀԱՅԿԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Նուիրում՝ Մխիթար Արքաեօր
ծննդեան երեքհարիւրամեակին (1676-1976):

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ախուրեան գետը՝ արեւելքէն դէպի հարաւ-արեւմուտք իր օձապտոյտ ընթացքովը, եւ Ծաղկոցաձորի գետակը (Ալաճա չայ) հիւսիսէն դէպի հարաւ իր վաղըզը իրարու կը միանան եւ կը ձեւացնեն եռանկիւն հրուանդան մը, որուն երկու կողմերը կը կազմեն անոնց փորած խորունկ եւ խարակածեւ պաղարտէ փոսերը: Այս եռանկիւնին դադաթը, դետախառնումին դիմացը, ուղղուած է դէպի հարաւ. իսկ անոր խարխիւր՝ մօտաւորապէս 1100 մեղր երկարութեամբ՝ կը բռնէ, հիւսիս-արեւելեան կողմէն, հրուանդանին շարունակութիւնը եղող տափարակ դաշտին լայնքը: Այս արեւելեան խարխիւր՝ մասամբ դժուած է հոն գտնուող երկու փոքր առուններու, Իգաձորի (Այդեձոր) եւ Գայլեձորի (Գլիձոր) նուազ խորունկ փոսերով:

Այսպէս ձեւաւորուած եռանկիւն գետին վրայ է հիմնուած Հայոց հրաշալի մայրաքաղաքը՝ Ամին՝:

1. Նախ քան Բագրատունիներուն Անին մայրաքաղաքի վերածելը, շատ հինէն արդէն հոն գոյութիւն ունէր ամրոց մը, եւ վայրն էր հեթանոսական պաշտամունքի մը, ինչպէս Եկեղեցաց դաւառի քր առանակիցը, որ Անահիտի պաշտամունքին նուիրում էր: Բագրատունիներու Շիրակի այս Անին համար՝ Վարդան Պատմիչ հետեւեալը կ'ըսէ. «Վարդան Անի՝ որ կոչի ինամբ» (Պատմութիւն տիեզերական, տպ. Մոսկուա 1861, էջ 117-118): Թէպէտ Արշակունիներու ժամանակ Անին չի յիշուիր, բայց Ե. դարու կէսերուն՝ Պարսիկներուն յանձնուած ամրոցներու կարգին կը յիշատակուի նաեւ անոր անունը, ինչ որ կը նշանակէ անոր կարեւորութիւնը: Այդ թուականէն առդին եւ մինչեւ Բագրատունիները, Անին դարձեալ կ'իյնայ տեսակ մը մոռացութեան մէջ: Բայց յայտնի է թէ այդ վայրը բնակուած էր, քանի որ հոն էր ծնած՝ է. դարու վերջին կէսին՝ մեծ թուարանագէտ ու տոմարագէտ Անանիան, որ մերթ կը կոչեն «Շիրակացի», եւ մերթ ալ «Անեցի»: Պարսկական եւ Բրջական գրութիւններու մէջ, անիկա կը յիշատակուի 𐭠𐭡 = Ամի անունով: Ասորինքը զայն կը կոչեն 𐭠𐭡 = Ամա, իսկ Բիւզանդացիները՝ Ἀνιον = Ամին: «Անի» բառը սանսկրիտ լեզուէն կու գայ եւ կը նշանակէ «կրակ», «հուր», «կրակի դիցուի»: Ոմանք կը կարծեն՝ թէ «Ամի» կը նշանակէ «մայր» (Անի = Հանի =

Աշխարհագրական այս դիրքը, միջնադարեան հասկացողութեամբ, գերազանցօրէն ռազմական ապահով վայր մը կը ներկայացնէ. բազմաթիւ ուրիշ քաղաքներ ալ, Հայաստանէն դուրս, շինուած են նախընտրութեամբ՝ նման դիրքերու վրայ, օրինակ՝ Բիւզանդիոնը:

Բազրատունիները ճարտար ռազմավարութեամբ մը օգտուեցան հողին այս ձեւաւորումէն, հոն հաստատելու համար իրենց մայրաքաղաքը: Եւ որպէսզի դիրքին ներկայացուցած ռազմական բնական առաւելութիւնը ա՛լ աւելի զօրացնեն, այդ եռանկիւն հրուանդանը շրջապատեցին պատկառազգու պարիսպներով:

Ծաղկոցաձորի եւ Ախուրեանի երկայնքին շինեցին միաշարք պարիսպներու երկայն գիծ մը, իսկ հիւսիս-արեւելեան կողմը՝ տափարակ դաշտադէտին ղիմացը, ուրկէ պիտի գար թշնամի բանակին յարձակող ալիքը², հիմնեցին կրկնակ պարսպաշար մը, բազմաթիւ աշտարակներով եւ բուրգերով զօրացած: Այս պարսպադիւղը պաշտպանուած էր արուեստական խորունկ խրամով մը, որ կը կապէր Իգաձորը՝ Գայլաձորին (Պատկեր 1):

Եռանկիւնաձեւ հրուանդանը շրջապատող պարիսպներու ընդհանուր երկարութիւնն էր 4100 մետր, իսկ եռանկեան տրամագիծը՝ հազիւ 1000 մետր: Այս չափերը կու տան պարիսպներուն մէջ պարփանուած քաղաքամէջին ընդհանուր տարածութիւնը, ($\frac{1}{2} \times 1100 \times 1000$), մօտաւորապէս 50-55 հեկտարի փոքրիկ միջոց մը:

Արեւելեան կողմի, այսինքն՝ եռանկիւնին խարխիւին պարիսպներուն վրայ բացուած էին քաղաքին գլխաւոր դռները, Իգաձորի (կամ Ծաղկոցի, կամ Զորի) դուռը, Կարինի դուռը, Աւագ դուռը, Դուրինի (Դունայ) դուռը, Գլիձորի (Գայլեձոր) դուռը, եւայլն: Այս դռներուն միջոցով էր որ Անին իր կապը կը պահէր արտաքին աշխարհին հետ, դէպի դուրս ուղղուած ճամբաներու շնորհիւ, ուրկէ խարհին հետ, դէպի դուրս ուղղուած ճամբաներու շնորհիւ, ուրկէ կու գային եւ կ'երթային բազմաթիւ կարաւաններ, Արեւելքէն կամ Արեւմուտքէն: Ասիկա՝ Անիին Ֆլընծայէր վաճառաշահ կեդրոնական քաղաքի մը դիրքը, որ իր պայծառութեան գլխաւոր սատարողն էր:

Այսպէս ամրացած, քաղաքատար փոքրիկ եռանկիւնին մէջ հաստատուեցաւ հայ աւագանին, իր աղնուական կարգ ու սարքով,

մեծ մայր): Թուրքերը կ'ըսեն Անա = Անու = Մայր: Հաւանաբար, հեթանոսական շրջանէն մնացած դիցային անուանակոչում մը ըլլայ, վայրը՝ մայր դիցուհիի մը նուիրուած ըլլալէն:

2. Այս կէտը մասնաւոր կերպով կը նշէ Մատթէոս Ուռհայեցի պատմիչը՝ ըսելով. «Էր քաղաքն շուրջանակի քարակտուր, եւ էր գետն Ախուրեան շրջապատ, բայց միայն ի մի կողմն կայր տեղի ինչ դոյր՝ որպէս թէ նեառնկեց մի» (Պատմութիւն, Երուսաղէմ, տպ. Սրբ. Յակոբեանց, 1869, էջ 177):

պալատներով, ապարանքներով, աննման եկեղեցիներով. հոն էր որ գործեցին հայ վաճառականները՝ իրենց արեւտրական բանուկ շուկայով, հիւրանոցներով, կարաւանատուններով, փողոկներով³, կուղպակներով եւ զանազան աշխատանոցներով. կօշկարարոցներ, դարբնոցներ, բազնոցներ (կերպասագործ), նալպանոցներ, սառահոցներ (համետագործ), կատոցներ (դերձակատուն) եւայլն:

Եւ որովհետեւ Անիի պարիսպներէն ներս եղած տարածութիւնը փոքր էր, հազիւ 15-20.000 բնակչութեան մը բաւարար⁴, ապա ուրեմն հասարակ ժողովուրդը ստիպուած էր հաստատուիլ պարիսպներէն դուրս, մասամբ Ախուրեանի եւ Ծաղկոցաձորի պաշտպանութեան մէջ, որոնք ճարտար կերպով յարմարեցուած էին բնակութեան համար, եւ մասամբ ալ՝ արեւելեան պարիսպներուն առաջ տարածուած դաշտին վրայ, ուր աշխատաւորներու կարեւոր բազմութիւն մը հաստատուած էր:

Դարերու հոլովումը չէ կրցած բոլորովին ջնջել այս արտապարիսպի բնակչութեան ձգած հետքերը, թէեւ այսօր այդ վայրը յատկացուած ըլլայ վարուցանքի, ուր կը մշակուին ցորեն եւ գարի:

3. «Փնդուկ»՝ արաբներու «Փոստուէն» է, որ կը նշանակէ՝ մթնափնդ. իսկ «կուղպակ» կը պակնէ, խամուք:

4. Անիի մասին թէեւ Մտթ. Ուռհայեցի կը գրէ, «Էր Անի բազմաբոխ, լցեալ քաղաքն, բիւրք բիւրոց՝ արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, որ եւ հիացումն արկանէր տեսողացն, զոր կարծեալ զօրացն բազմաց՝ եթէ մեծ մասն աշխարհիս Հայոց է. եւ յայնմ աւուր (Ալփասլանէ գրաւման ժամանակ՝ 1084ին), հազար եւ մէկ եկեղեցի ի պատարագի վայր ի յԱնի» (Պատմ. անդ. էջ 177), սակայն պէտք է նկատել թէ արտապարիսպի ժողովուրդը՝ օրուան մէջ միայն քաղաք կու գար, կամ ալ վտանգի պահուն՝ պաշտպանութեան համար պարիսպներէն ներս, ինչ որ «բիւրք բիւրոց» բազմութեամբ կը խնդէր քաղաքը: Ասիկա չի մերժեր թէ քաղաքամէջին բնակչութիւնը չէր անցներ 20.000ը: Իսկ ինչ կը վերաբերի «հազար եւ մէկ» եկեղեցիներուն, առաւելագոյն հաշիւով՝ Անին չէր կրնար պարունակել աւելի քան 50-100 եկեղեցի: Անիի ժամանակակից ճամբորդներէն ոմանք կը կարծեն հաշուած ըլլալ 100 եկեղեցի, իրականին մէջ՝ ներկայիս կը հաշուեն 20-30 եկեղեցի: Մ. Ուռհայեցիի ըսած «հազար եւ մէկ եկեղեցի ի պատարագի» կրնայ նշանակել «պատարագ մատուցանելի սեղաններ» (հմտ. ՕՐՄԱՆԵԱՆ ՄՂՔ. ԱՐՔՊ., Ազգապատմութիւն, Ա. հտ., Կ. Պոլիս 1912, սիւն. 1242), ինչ որ կրնայ 1001 թիւին բացատրութիւն մը տալ, եթէ հաշուենք քաղաքին 70 աշտարակներուն իւրաքանչիւրին մէջ ալ հաստատուած խորանները: Թողունք որ միջնադարեան պատմագիրները մասնաւոր հակում մը ունին չափազանցելու. ասիկա՝ մաս կը կազմէ իրենց գրական արուեստին: [Այս թիւը ինձ կը յիշեցնէ արաբական պատմութեան հազար եւ մէկ գիրքները]: Եթէ նկատի առնենք 1001 եկեղեցիներու գրաւելիք հողամասի տարածութիւնը, անիկա պիտի ընէ մօտաւորապէս 10 հեկտար հող, 55 հեկտարի վրայ: Հասկա ո՛ր պիտի տեղաւորենք մնացած պալատները, բնակարանները, մթերանոցները, գործատեղիները, հրապարակները եւ փողոցները. մնացած 45 հեկտարը պիտի չբաւէր այս բոլորին:

Տեղումն ուշադիր քննութիւնը ցոյց կու տայ հետքեր հոն ապրած ժողովուրդի կեանքին եւ դիրքին մասին⁵ :

Արեւելեան պարիսպներու Աւագ դռնէն մօտաւորապէս 500 մեդր հեռու, դէպի հիւսիս կը գտնուին մեծ բաղնիքի մը կիսականդուն մնացորդները. անկից աւելի հեռու, մօտաւորապէս 1000 մեդր եւս դէպի հիւսիս, կը տեսնուին մատուռի մը մնացորդները՝ որոնց կից կան գեղեցիկ մահարձանի մը աւերակները: Նման մնացորդներ վարելի է տեսնել դէպի արեւելք, Հոռոմոսի վանքին ուղղութեամբ, եւ դէպի արեւմուտք՝ Անի գիւղի ուղղութեամբ: Անիի դռներուն առաջ փռուած այս դաշտին մէջ կը տեսնուին կրաշաղախէ թանձրամած հիմեր՝ մեծամեծ պարիսպներու: Հիւսիսային պարիսպին կից, ջրալից խրամին զուգահեռական, կայ ձգուած լայն ճամբայ մը՝ դէպի արեւելք: Այս լայն ճանապարհը եղբրուած է քերձ՝ միւս կողմէն՝ թանձրամած բերդանման որձաքարէ պատերով: Այս պարսպանման պատերէն ներս, ընդարձակ դաշտավայրին վրայ տեսանելի է բնակութեանց դասաւորում մը: Այս ամբողջ դաշտավայրը ծածկուած էր՝ այն ատեն՝ ծառաստաններով եւ մրդաստաններով, որոնց մէջ կղզիացած էին առանձին թաղամասեր եւ արուարձաններ, իրարմէ մէկ կամ երկու հարիւր քայլ հեռաւորութեան մը վրայ: Նոյնիսկ կարելի է զանազանել առանձին անհատական սեփականութիւններ՝ իրենց բնակարաններով, պարտէզներով, եկեղեցիներով եւ գերեզմանատուներով, որոնցմէ մէկը՝ Ծաղկոցաձորի վրայ, իսկ միւսը՝ Հոռոմոսի ճամբուն վրայ: Այս գերեզմանատուներուն ընդարձակութիւնը կը յայտնէ արտապարիսպի բնակիչներու թիւին կարեւորութիւնը: Որովհետեւ պարսպամէջի ազնուական եւ բարձր դասու բնակիչները բնաւ պիտի չզիջանէին հասարակաց գերեզմանոցներու մէջ թաղուելու, այլ՝ պարսպամէջի տոհմային եկեղեցիներուն եւ անոնց կից գերեզմանոցներու մէջ կը թաղուէին: Արտապարիսպի գերեզմանոցներուն մէջ կը տեսնուին տակաւին շիրիմներու մնացորդներ, որոնց մէջէն լաւագոյն պահուածը՝ Կիրակոս Վարդապետինն է. «Այս է հանգիստ Կիրակոս Վարդապետին որ նահատակեցաւ յանօրինաց յիշեցէք ի Գրիստոս. թվ. 975»⁶: Կիրակոս Վարդապետի դամբարանէն դէպի հարաւ կը գտնուին ուրիշ դամբարանի մը փլատակները, աւելի չքեղ եւ աւելի մեծ շինուածքով մը: Վերը յիշուած մեծ բաղնիքը կը գտնուի այս արուարձանները հաղորդակցութեան մէջ գնող մեծ ճամբուն եզերքը:

Բացի այս բաղնիքէն, կար ջաղացք մըն ալ՝ Գայլեձորի մէջ, որ

5. ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆԵԱՆ, Նիւթեր հայկական ճարտարապետութեան, հտ. Ա., Երեւան 1942, էջ 327-388:

6. Հ. ՂԵՒՈՆԻ ԱԼԻՇԱՆ, Երեւան, Վեհտիկ - Ս. Ղազար 1881, էջ 34:

կը կոչուէր «Հատորհնիկ», ու նաեւ ձիթահանք մը՝ Կարինի դրան կողմը⁷: Նոյնիսկ՝ Ախուրեան գետի հանդիպակաց ափն ալ բնակուած էր, դատելով հոն գտնուած եկեղեցիներու եւ բնակարաններու բազմաթիւ աւերակներու մնացորդներէն: Այս ափի բնակչութիւնը քաղաքին հետ անմիջական հաղորդակցութեան մէջ էր երեք կամուրջներով:

Պարիսպներէն դուրս բնակողները, թշնամիի յարձակման պարագային, ամբողջութեամբ պարիսպներէն ներսի քաղաքը վճառաստանէին, ինչպէս էր միջնադարեան աւատական սովորութիւնը:

Այս համառօտ նկարագրութեանէն բաւական պարզ կ'ըլլայ եզրակացնել՝ թէ այժմեան մեր տեսած «Անի քաղաք»ը, պարիսպներէն ներս, «Անի քաղաք»ի ամբողջ է, եւ թէ բուն քաղաքը կը տարածուէր այդ ամբողջին պարիսպներէն դուրս՝ ընդարձակ դաշտադեպին վրայ, իր հարիւր հազար բնակչութեամբ:

Այս արտապարիսպի Անի քաղաքին մէջ էր կառուցուած, Աւագ դռնէն մօտ 1500 մեդր դէպի հիւսիս, Հովիւի եկեղեցին⁸, որ թէեւ այժմ ամայութեան մէջ կորսուած է եւ առանձին մնացած, մեծ մասով կիսակործան, եւ կը վրիպի յաճախ Անի այցելողներու ուշադրութենէն, սակայն հարկ է ընդգծել որ անիկա կը կազմէ հայկական ճարտարապետութեան անդուգական գոհարներէն մին, որ իր տեղը պէտք է ունենայ ընդհանուր ճարտարապետութեան պատմութեան մէջ (Պատկ. 2):

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժողովրդական աւանդութիւնները պատմական իրողութիւններու գեղեցկացած եւ երեւակայութեամբ չափազանցուած մէկ ձեւն են:

Հովիւի եկեղեցին ալ ունի իր ժողովրդական գեղեցիկ աւանդութիւնը, եւ նոյն իսկ երկու փոփոխակ՝ այդ աւանդութեան:

Այդ ժողովրդական աւանդութիւններէն առաջինը կը պատմէ՝ թէ երբ Գաղկաշէն Ս. Գրիգորի Թոմարի, բարձրաշէն եկեղեցիին կառուցումը, պարսպամէջի քաղաքին մէջ, լրացաւ, անիկա եղաւ պարիսպներէն շատ աւելի բարձր, եւ արտապարիսպի բնակիչները հեռուէն զանիկա տեսան ու զմայլեցան: Այս բազմութեան մէջէն ոչխարներու հօտ ունեցող հովիւի մը կինը ուզեց այդ նորակառոյց տաճարին մէջ երթալ, գոհարանական աղօթք մը ըսելու համար: Սա-

7. ՆՈՅՆ, յիշ. գրծ. էջ 88:

8. Հովիւի եկեղեցին կը կոչուի նաեւ՝ Ժողովրդական ասացուածքով՝ «Նախրմուլ ժամ», «Նախրարածի եկեղեցին», այսինքն՝ նախիր, հօտ ունեցողին եկեղեցին: Թուրքերն ալ՝ Ժողովրդական ասացուածքին հետեւելով՝ կը կոչեն «Զօպան ֆիլիսէս»:

կայն՝ նէ այդ փափաքը չկրցաւ իրադրօնել: Արդարեւ, երբ ան ուղեց այդ նորաշէն եւ երկնասլաց եկեղեցին մտնել, Ղինքը դուրս վտարեցին, որպէս ռամիկ ու անարժան՝ այդպիսի թաղաւորական եկեղեցիի մը մէջ աղօթելու: Նման հրաշալիք մը՝ միայն թաղաւորին եւ իշխաններուն վերապահուած ֆր:

Հովիւին սրտաբեկ կիներ, քաղաքամէջէն վերադարձին, ամուսինին պատմեց իրեն եղած անարդանքը: Հովիւը իր կիներ մխիթարելու եւ եղած անարդանքը սրբելու համար՝ որոշեց իրենց արուարձանին մէջ, իր համեմատաբար համեստ միջոցներովը նման եռայարկ եկեղեցի մը շինել, անշուշտ աւելի փոքր, բայց որքան աւելի դեղեցիկ: Ահա, ա՛յսպէս կանգնեցաւ Հովիւի փոքրիկ եկեղեցին, Անիի պարիսպներէն դուրս, անոր մէկ արուարձանին մէջ, քաղաքամէջէն 1500 մեդր հեռու:

Իսկ երկրորդ աւանդութիւնը, որ Փրոֆ. Վ. Յարութիւնեան կը պատմէ⁹, որպէս ժողովրդական հետաքրքիր աւանդութիւն, վը տարբերի առաջինէն: Ըստ այսմ, «ծեր հովիւ մը» իբր թէ Զատիկի օրը չի յաջողիր Անիի որեւէ մէկ եկեղեցին մտնել ու հոն տեղ դնել — այնքան բարեպաշտ բազմութեամբ մը անոնք լեցուած էին — ու ճարհատ՝ կ'որոշէ իր փաղին մէջ, իրեն համար, փոքրիկ մատուռ մը շինել, Գաղկաշէնի նման եռայարկ, ուրիշ անգամ Զատիկական տօնակատարութենէն չզրկուելու համար:

Այս աւանդութիւնները, որոնց ճշգրտութիւնը չենք վրնար հաստատել եւ կամ քննել, եւ որ չենք կրնար ալ մերժել, թէեւ իրարմէ բաւական կը տարբերին, — առաջինը՝ աւելի Անեցիին հպարտութիւնը կը շեշտէ, իսկ երկրորդը՝ անոր խոր բարեպաշտութիւնը, — սակայն՝ մէկ կէտի մը վրայ գոնէ իրարու հետ կը համաձայնին: Այն է՝ թէ մէկ կէտի մը վրայ գոնէ իրարու հետ կը համաձայնին: Այն է՝ թէ երկուքն ալ այդ չքնաղ յիշատակարանին շինութիւնը կը վերադրեն ռամիկ ժողովուրդէն ելած եւ արտապարիսպի մէկ արուարձանը բընակող հովիւի մը, եւ ոչ թէ ազնուականի մը, ինչպէս էր այն ատեն՝ շինութիւնը հրաժարեցաւ իր ֆրիթէն, ձգեց երկիրը եւ ժողովուրդը ու դադարեցնուած ճամբան բռնած՝ զնաց օտար հորիզոններու տակ ապաստան մը փնտռելու, ժողովուրդէն ելած անհատներ էին որ ձեռք առին մեր յիշատակարաններու շինութիւնները:

Հասարակ ժողովուրդի դաւակ, այս փոքրիկ փե չքնաղ եկեղեցին շինողը, հաւանաբար «նախարարած» մը եղած ըլլայ, մէկը որ ոչ խարի հօտ ու նախիր ունի. ուրեմն, քիչ թէ շատ՝ անձնական հարստութեան մը տէր մէկը: Անին՝ Ժ. դարու վերջը եւ ԺԱ. դարու ընտանեացիներէն մը տէր մէկը: Անին՝ Ժ. դարու վերջը եւ ԺԱ. դարու սկիզբը հասած էր այնպիսի բարգաւաճ եւ հարուստ վիճակի մը, որ

9. ՎԱՐԱՋԴԱՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ԱՅԻ քաղաք, Երեւան, 1964, էջ 67:

հոն նոյնիսկ հովիւները «մետաքսեայ հագուստներով կը շրջէին»¹⁰, ինչ որ կը ցուցնէ անոնց բարեկեցիկ վիճակը: Ուստի, զարմանալի եւ կամ անկարելի բան մը չէ որ հովիւ մը ի վիճակի ըլլար նման փոքրիկ մատուռ մը շինելու, մանաւանդ որ չէնքին նիւթական պղտիկութեան պատճառով, ինքնին մեծածախս շինութիւն մը չէ եղած¹¹:

Թէեւ այս չէնքը կը կոչեն «եկեղեցի» եւ կամ «ժամ», ինչ որ կարծել պիտի տայ թէ կարեւոր եւ քաւական մեծ չափերու վրայ շինութիւն մը ըլլայ, իրականին մէջ՝ անիկա փոքր մատուռի մը տարածութիւնը փե չափերը չ'անցնիր: Հաւանաբար, ան եղած ըլլայ փոքրիկ, ընտանեկան շիրիմ մը, հովիւին եւ անոր վնոջը համար շինուած, հովիւին ողջութեան: Սակայն, այս պարագան ալ չենք կրնար հաստատապէս ըսել, որովհետեւ շինուածքին վայրը գերեզմանոցի մը մէջը չէ: Գերեզմանոցէ դուրս շիրիմ մը՝ հազիւ թէ բարձր աղանդական մը իրաւունք ունենար շինելու: Միւս կողմէ՝ չէնքն ներս եւ գետնին վրայ որեւէ հետք չկայ՝ հոն մէկը թաղուած ըլլալուն: Իմ կարծիքով, նկատած նաեւ կառուցումին ներքին սարքաւորումը, անիկա եղած է՝ հաւանաբար՝ ընտանեկան աղօթարան մը (oratoire):

Ընդհանրապէս մեր նախնիք՝ բարի սովորութիւնն ունեցած են իրենց կառուցած յիշատակարաններուն վրայ (եկեղեցի, մատուռ, շիրիմ) վիճակի արձանագրութիւններ դնել, շինողին անունը յաւերժացնելով: Հոս՝ ոչ մէկ արձանագրութիւն կայ, ոչ մէկ յիշատակարան դնուած է: Կործանած քարերուն վրայ, ինչ որ բոլորովին անծանօթ կը պահէ շինել տուողին եւ կամ ճարտարապետ վարպետին անունները:

«Հովիւի եկեղեցին»՝ որք մըն է, մեր յիշատակարաններու շարքին մէջ:

Բայց այս «որք»ը, իր ճարտարապետական հանճարեղ յօրինուածքով՝ երեւակայութեան թռիչք մըն է, գերազանցող՝ մեղի ծանօթ յիշատակարաններէն շատերը: Ծարտարապետական չնաչխարհիկ մարդարիտ մը:

Անոր շինուածածեւը, որ կը ձգտի՝ արտաքին տեսքով՝ Գաղկաշէն Ս. Գրիգորի մէկ մանրանկար օրինակն ըլլալ, ցոյց կու տայ թէ անոր վառուցումը Ժ. դարու վերջերուն, եւ կամ ամէնէն ուշ՝ ԺԱ. դարու առաջին քառորդին փեղած ըլլայ: Որովհետեւ արդէն ԺԱ. դարուն կէսէն սկսեալ, Անիի արուարձաններուն մէջ ժամանակ պիտի չունենային գեղարուեստական շինութիւններով զբաղելու, քաղաքա-

10. ՄՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՕՆԵՑԻ (ԱՍՈՂԻԿ), Տիեզերակամ Պատմութիւն, Գիրք Գ, Գլ. Գ. Փարիզ, տպ. Կ. Վ. Շահնազարեանց, էջ 147:

11. ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆԵԱՆ, յիշ. գրծ. էջ 319:

կան անապահով իրադարձություններու պատճառով: Ուստի, անիկա չինուած պէտք է ըլլայ ա՛յն տարիներուն՝ երբ Բաղրատունիներու դօրութիւնը տակաւին ապահովութիւն եւ կեանք կը տարածէր Անիի պարիսպներէն դուրս:

ԻՐԱՅԱՏՈՒԿ ՈՃԸ

Մեր եկեղեցիներու աւանդական եւ այլեւս դասական նկատուած իւրայատուկ ոճէն տարբեր ճարտարապետական կառուցում մը կը ներկայացնէ Հովիւի եկեղեցին: Ան կը բարձրանայ կլոր երկաստիճան պատուանդանի մը (հարթակ, plate-forme) վրայ՝ եռաշարկ շինուածքով մը, ներշնչուած քաղաքամէջի նորակառոյց Գաղկազէն Ս. Գրիգոր եկեղեցիին կերպարին ընդհանուր ուրուագիծէն: Բայց անկէ կը զանազանուի արտաքին ճարտարապետական իր դասաւորումովը եւ մանաւանդ ներքին յօրինուածային (structural) կառուցումովը (Պատկ. 3):

Արտաքին տեսքով՝ ան կը ներկայանայ 7.00 մետր տրամագիծ ունեցող կլոր հարթակին վրայ, գետնայարկին՝ տասներկու թեւերով աստղաձեւ շինութիւն մը, որուն վրայ կը բարձրանայ առաջին յարկի վեցանկին շինուածքը, եւ երրորդ յարկը կազմող կլոր կաթողիկէն՝ իր կոնաձեւ տանիքովը: Այս բոլորը միասեղ կը բռնեն 11.00 մետրի բարձրութիւն մը (գետնայարկը՝ 5.00 մ., առաջին յարկը՝ 3.00 մ. եւ կաթողիկէն՝ տանիքով՝ 3.00 մ.)¹²:

Գետնայարկի աստղաձեւ յատակագիծը կը գծուի 6.00 մետրի տրամագիծ ունեցող չրջանակի մը մէջ, իսկ առաջին յարկի վեցանկին շինութիւնը (վերնատուն) կը գծուի 4.00 մետր տրամագիծով չրջանակի մը մէջ: Կլոր կաթողիկէն 2.50 մետր տրամագիծ մը ունի:

Արտաքսապէս՝ այս երեք տարբեր ձեւերու ծաւալները (volume) իրենց չափերու համեմատութեամբ՝ յաջող կերպով իրարու կը զօդուին եւ կը համադրուին, եւ ամբողջութեան կու տան գերազանց ներդաշնակութիւն մը՝ որուն թողած տպաւորութիւնը դիտողին հոգին կը հրճուեցնէ: Ինչ որ՝ գեղարուեստի տեսակէտէն՝ ճարտարապետին համար մեծ յաջողութիւն մը կը կազմէ: Հոգեկան աղնիւ յուզում մը սկսածառել մարդուս. ահա՛ գեղարուեստին նպատակը:

Արտաքին աստղաձեւ յատակագիծը ստացուած է՝ հայոց ճարտարապետութեան մշակած եռանկիւնի խորշերու միջոցաւ: Այս խորշերու կազմած որմի սրածայր անկիւնները զարդարուած են նուրբ

որմասիւներով, իրարու կապուած՝ նոյնքան նուրբ եւ սրակտուց աղեղներու շարքով մը, փորշերու եռանկիւնաձեւին համապատասխան:

Իսկ առաջին յարկը՝ իր պարզութիւնը կը ցուցադրէ իր պատերուն վեցանկիւնի շարուածքին երկայնքին: Միայն նեղ խորշեր (niche)՝ բազմանկիւնին անկիւններուն վրայ, եւ քիւլին եռանկիւնաձեւ խոտոր դիծը կը կազմեն գետնայարկի տեսքին պատասխան մը, պատրաստելով միանգամայն թուրակ կաթողիկէին անպաճոյճ կառուցուածքին, որուն միօրինակութիւնը կը կոտրեն չորս նեղ լուսամուտներ միայն՝ ուղղուած աշխարհագրական չորս ուղղութիւններուն:

Առաջին յարկի (վերնատուն) հարաւ-արեւմտեան որմին վրայ կայ մուտքի դուռ մը, առջեւ վոքրիկ քառակուսի հարթակով մը (plate-forme), որ կը ծառայէր վերնատան մուտքը դիւրացնելու: Այս դուռը կը համապատասխանէ՝ նոյն ուղղութիւնը ունեցող՝ ներքնայարկի դրան: Վերնատունը ունի նաեւ դէպի արեւելք ուղղուած լուսամուտ մը:

Ոմանց համար առեղծուած մը եղած է՝ բազմաշարկ մեր եկեղեցիներուն մէջ՝ սանդուղի հետք չտեսնուիլը: Պարագան նոյնն է Զուարթնոցի համար ալ, Գաղկազէնի համար ալ, եւ նոյնը՝ Հովիւի եկեղեցիին համար: Բայց, բարեբախտաբար, այս վերջինը մասամբ կանգուն մնացած լըլալուն շնորհիւ կը տեսնենք առաջին յարկի մուտքի դուռը՝ իր մուտքի հարթակովը: Ինչ որ մտածել կու տայ՝ թէ վերնատուն ելլելու համար, հաւանաբար, փայտէ շարժական սանդուղի մը կը գործածէին: Որովհետեւ այնքան նրբօրէն յղկուած որմերու արտաքին երեսին վրայ չի տեսնուիր որեւէ մնայուն սանդուղի մը հետքերը: Փայտաշէն շարժական սանդուղի մը լիովին պիտի բաւէր, հազուադէպ կերպով վերնատունը ելլողներուն: Հարկ է նշելատել՝ որ մնայուն քարաշէն սանդուղի մը պիտի խանդաբէր գետնայարկի արտաքին տեսքին ներդաշնակութիւնը:

Զուարթնոցի եւ անոր սխալ հասկցուած օրինակին՝ Գաղկազէնի համար սանդուղի առեղծուածը ինքնին կը վերստի, սոյն շէնքերուն ընդհանուր յօրինուածային առեղծուածին մէջ:

Ինչպէս դիտենք, երկու վարկածներ կան՝ անոնց շինութեան յօրինուածային ձեւին մասին: Մին՝ դիտական հիմերու վրայ հաստատուած, միւսը՝ զգացական ենթադրութեան վրայ:

Թէեւ Հովիւի եկեղեցիին յատակագիծը արտաքուստ վը ձեւացնէ տասներկու թեւերով աստղ մը, նոյն յատակագիծը՝ ներքուստ, գետնայարկին համար միայն, վը ներկայացնէ վեցթեւեան աստղ մը, որ կը յիշեցնէ բազմախորան եկեղեցիներու դրութիւնը. եւ այս տեսակէտէն՝ ան թերեւս կարելի ըլլայ կապել Անիի Ապուղամբենց եւ Ս. Փրկիչ եկեղեցիներու դասին:

12. Այս չափերը կը համապատասխանեն Թ. Թորմանեանի վերակազմութեան, որ կատարուած է տակաւին կանգուն մնացած մասերու չափազերումէն:

Բաղմախորան եկեղեցիներու շինութիւնը Հայոց մէջ տարածուեցաւ Ժ. դարուն, երբ բարեգործ եւ բարեպաշտ նուիրատուներու պատարագի աղերսները շատցան, այն աստիճան՝ որ օրական պատարագներու թիւը աճելով, պէտք եղան նոր խորաններ¹³։ Բաղմախորան եկեղեցիները մասնաւորաբար Սիւնեաց ճարտարապետական դպրոցին մէկ յատկանիշը կազմեցին Ժ. դարէն սկսեալ։

Սակայն, Հովիւի եկեղեցիին յատկապէս յիշատակական նկատառումը՝ անոր տեղը կ'որոշէ աստղաձեւ շինութիւններու շարքին մէջ (Պատկ. 4)։

Յատակագիծի այս ձեւի համադրում մը, միջնադարեան Հայաստանի եկեղեցական ճարտարապետութեան մէջ, եղական պարագայ մը կը ներկայացնէ, Անիի միջնաբերդի եկեղեցիներէն՝ վեցանկիւնի մատրան հետ։

Այս եղական պարագան կը պարտինք անոր՝ որ Հովիւի եկեղեցին մասնաւոր անհատի մը շինութիւնն ըլլալով, շինող ճարտարապետին նախաձեռնութիւնը ազատ եղած է հայկական պաշտօնական ճարտարապետութեան կանոնները յարգելէ։

Շէնքին ներսէն, վեցթեւեան աստղին ներքին դադաթներուն կը բարձրանան սիւնախուրճեր, որոնցմէ կը մեկնին վեց փխարուոր աղեղներ՝ դետնայարկի ձեղունը վեր բռնող։

Այս ձեղունը միանգամայն կը կազմէ վերնատան յատակը։

Այս աղեղներուն յօրինուածային դերը եւ շինութեան գիտարուեստը եղական պարագայ մը վը կազմէ՝ այդ Ժ. դարուն համար, ոչ միայն հայկական ճարտարապետութեան մէջ, այլ նաեւ ընդհանուր ճարտարապետութեան համար։ Որովհետեւ ասոնք իրենց յղացումի եւ կառուցումի ձեւովը կը մարմնացնեն՝ թէ՛ խաչաձեւ ուղ աղեղներու, թէ՛ կամարաշիջերու եւ թէ՛ սիւնախուրճերու դրութիւնները, որոնք երեք հարիւր տարի վերջ միայն Եւրոպայի փառքը կազմեցին՝ գոթական ոճին մէջ։ Ասիկա հայ վարպետին ճարտարամտութեան եւ շինարուեստի հմտութեան չափանիշը ցոյց կու տայ (Պատկ. 5)։

Արդարեւ՝ այս վեց աղեղները մէկ ոստումով չեն անցնիր մէկ որմասիւնախուրճէն միւսը բաժնող 3.00 մետրի պարագայ անջրպետը, ինչ որ կառուցումի շատ պարզ եւ դիւրին ձեւ մը պիտի ըլլար։ Այլ՝ անոնք 1.50 մետրի տրամագիծով կիսաբոլորակներ կը ձեւացնեն, որոնց մէկ ծայրը վը կռնի որմասիւններուն վրայ, իսկ միւս ծայրերը՝ առանց սիւնի՝ ի մի վը հաւաքուին առաստաղին կեդրոնին վրայ, հոն ձեւացնելով աղեղնախուրճին առկախ աղեղակապ քարը (clef de voûte), որ կը մնայ պարագային մէջ, իջնելով մինչեւ աղեղ-

13. ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՍ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, Ա. հտ., Կ. Պոլիս 1912, սիւն. 1105։

ներու՝ որմասիւններէն մեկնող գլուխներուն (naissance des arcs) բարձրութեան (Պատկ. 6 Ա)։

Այս շինուածքը զարմանքով դիտողը, բնազդաբար, պիտի փնտռէ քարերու թափիլը արգիլող կեդրոնական սիւն մը, որ չկայ։

Հանճարեղ ճարտարապետը քարերուն տաշուածքի ձեւին դադանիքը ծածկեր է կամարներուն մէջ եւ արտաքուստ ցոյց է տուեր սովորական տաշուածքի ձեւը՝ որ կեղծ է։ Այսօր, ձեղունին մասամբ կործանած ըլլալը ի յայտ կը բերէ աղեղներու շինութեան դադանիքը։ Այս քարերը այնպիսի տաշուածք մը ունին, այնպէս իրարու կ'ընդելուզուին՝ որ «չորս անգամ աւելի մեծ նոյնանման շինութեան մը համար կատարեալ ապահովութիւն կ'ընծայեն»¹⁴։

Անշուշտ, կեդրոնական այս առկախ աղեղակապ քարէն կախուած պիտի ըլլար ջահ մը կամ կանթեղ մը։

Եթէ մօտէն քննենք այս աղեղներու ներփակած գիտարուեստը (technique), պիտի տեսնենք որ ճարտարապետը օգտուեր է չէնքին նիւթական փոքրկոտթենէն եւ միայն 3.00 մետրի՝ բաղդատարար փոքրիկ պարագայ անջրպետէն, եւ դէպի չէնքի կեդրոնը երկարող իր շարած կամարներուն պատճառած իրարընդէմ ճնշականութիւնը յաջող կերպով օգտագործեր է, կամարակապ քարը պարագային վրայ վեր բռնելու համար, քարերուն մասնաւոր տաշուածքով՝ զանոնք իրարու ընդելուզելով։ Որովհետեւ այս պարագային՝ գործածուած շաղախը չի կրնար կշռական դեր մը խաղալ (Պատկ. 6 Բ)։

Հոս՝ պէտք է վեր հանել քարերու մասնաւոր տաշուածքին դրութուութիւնը, մասնաւոր այդ Ժ. դարուն, երբ վիմահատութեան (stéréotomie) գիտութիւնը դոյութիւն չունէր, քանի որ տակաւին անծանօթ էր «միջոցի երկրաչափութիւն»ը (géométrie dans l'espace)։ Այս պարագան ա'լ ասելի վեր կը հանէ ճարտարապետին արժանիքը եւ անոր վարպետ քարագործ մը ըլլալը կը ցուցնէ։

Շինութեան այս գիտարուեստը տեսակ մը նախակարապետն է, սկզբունքի տեսակէտով, այսօր գործածուած նոր գիտարուեստի մը՝ որ կը կոչուի «նախաճնշում» (précontrainte)¹⁵։

Յօրինուածային այս բացատրութիւնը իր հաստատումը կը գտնէ անոր մէջ՝ որ Հովիւի եկեղեցիին մէկ մասը կործանած ըլլալով, ա-

14. ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆԵԱՆ, յիշ. գրծ. էջ 319։

15. Հովիւի եկեղեցիին դէպի կեդրոն կախուած աղեղներուն յօրինուածային գիտարուեստին (technique-ին) մօտաւոր եւ պարզ բացատրութիւն մը տալու համար՝ անոնք սա շատ սրաղ օրինակը. տասնեակ մը հատորներէ բաղկացած գիրքերու շարք մը կարելի է՝ գիրքերը իրարու սեղմելով՝ ատեն մը առկախ բռնել, առանց թողլու՝ որ անոնք վար թափին։ Ահա՝ այս է աղեղներու դադանիքին սկզբունքը։ Այս սկզբունքին համաձայն են շինուած աւելի վերջը գործածուած anse de panier կոչուած աղեղները։

ղեղներին ոմանք ալ կործանած են, որովհետեւ ճարտարապետին հաշուած հակընդդէմ ճնշականութեան կշռական հաւասարութիւնը խանդարուած է, եւ աղեղներն ու ձեղունը մեծ մասով ինկած են:

Այս կազմական սկզբունքին մէկ ուրիշ օրինակը կը գտնենք՝ աւելի մեծ չափի վրայ՝ Արատէսի (Ախա) ժամատան տանիքին կազմական կերպարին մէջ: Հոն՝ կիսաղեղները կու գան բռնել չըջանակաձեւ պսակ մը, որ կը վերցնէ կաթողիկէն:

Գետնայարկի կերպարը տեսնելէ վերջ, այժմ բարձրանանք վերնայարկը, դուռնէն տրուած փայտէ շարժական սանդուղէն: Այս յարկը՝ որ արտաքին տեսքով վեցկողմեան բազմանկիւն մըն է, ներքսապէս կը ներկայանայ կլոր: Ճր ամբողջական տրամագիծն է, արտաքուստ չափուած, 4.00 մեթր: Հոս կը գտնուի պատարագի սեղան մը¹⁶, որուն խորհրդանոցը (սկիհի պահարան) դրուած է՝ փոխանակ ձախին՝ աջակողմեան հարաւի պատին մէջ:


Այս յարկը եւ կաթողիկէն՝ ներքսապէս կիրով եւ գաճով ծեփուած են, հաւանաբար՝ աւելի յետին ժամանակի մէջ: Այս պատճառով կարելի չէ տեսնել թէ որմերը ինչ զարդարանք ունեցած են: Միայն խոյակաձեւ «որմաթիկունք»ները (console) կը տեսնուին՝ կլոր պատէն դուրս ցցուած, որոնց վրայ կու գան վառարանային կաթողիկէն վեր բռնող չորս կամարները՝ ձգուած արեւելքէն արեւմուտք եւ հիւսիսէն հարաւ: Այս յարկին միակ լուսամուտը՝ արեւելեան կողմէն՝ կ'իյնայ պատարագի սեղանին վրայ:

Հովիւի եկեղեցիին հռայարկ ծաւալը ճշտիւ կը ներգաշնակուի յատակագիծին արտայայտած աստղաձեւ կազմութեան:


Գետնայարկի աստղաձեւ կտրուած որմերը, շուքի եւ լոյսի խաղերով կ'ոգեւորեն եւ կը հարստացնեն ձեւը, որուն ծաւալական փոքրոկութիւնը կու գայ ա'լ աւելի շեշտել իր պատճառած երանութեան մը զգացումը:

ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԻՐԱՅԱՏՈՒԿ ԿԱՌՈՑՑԻՆ


Հովիւի եկեղեցիին յօրինուածային դրութիւնը եւ աստղաձեւ յատակագիծը իրարու սերտօրէն կապուած են եւ մէկը միւսէն կախում ունի: Տասներկուութեան աստղի ձեւը ուղղակի հետեւանք է անոր յօրինուածային դրութեան, որ ճարտարապետին երեւակայութեան թռիչքովը յաջող կերպով արտայայտուած է, զայն գեղարուեստական աղնիւ յօրինուածքի մը վերածելով: Այս իրողութիւնը աւելի պայծառօրէն պիտի տեսնուի երբ այս յատակագիծը վերլուծենք:




Պակ. 1.- ԱՆԻ տեղագրոյց քարտէսը:




Պատկ. 2.- Հովիտի եկեղեցիին ալժմու տեսքը :




Պատկ. 3.- Հովիտի եկեղեցիին վերակազմությանը՝ թ. թորամանյանի :




Հովիտի եկեղեցու յատակագիծը (Ա. յարկ)
Le plan de l'Eglise de Berger (I étage)



(Բ. յարկ — II étage)





Գ. յարկ — III étage




Պատկ. 5.— Հովիտի եկեղեցին՝ հատած, քստ թ. Թորամանյանի:


Պատկ. 4.— Հովիտի եկեղեցին յատակագիծը՝ քստ թ. Թորամանյանի:




Պտկ. 6.- Հովիտի եկեղեցիին հերժին կամարներու յօինուածային դերը:




Պտկ. 7.- Հովիտի եկեղեցիին կշռական ուրուագիծը:



ա. մայր յատակագիծ.




բ. Պատերուն թեթևացումը ճեղքէն.




գ. Պատերուն թեթևացումը շարժւիւն.


Պտկ. 8.- Հովիւի եկեղեցիին յօրինուածային ընթացքը:




Պտկ. 9.- Հովիւի եկեղեցիին յատակագիծին ներդաշնակ գիծը, առաջնորդ-շրջանակի մը մէջ գծուած՝ տասներկուրեւեան աստղ մը, ըստ Հելլենական դրութեան: Տասներկուրեւեան աստղը կազմուած է երեք քառակուսիներուն իրարու վրայ հովաւարածն դրուելով: Իւրաքանչիւր քառակուսիի կողմի արժէքն է $\sqrt{2} \times$ հառազայր առաջնորդ-շրջանակի:




Պատկ. 10.- Հովիտի եկեղեցիին կառուցուած Բր: Համեմատութիւնները կը ստացուին
Lundի դրութեամբ՝ ներդաշնակ զիծով:



Պատկ. 11.- Արեւմտի Հովերու աշտարակը, շինուած՝ Քերեսէս Անդրոնիկոսէ, առա-
ջին դարուն Ն. Ք.: Հնագոյն բազմանկիւնի շէնքերէն մէկն է (Նկար
ժ.Ը. դարու):





Պատկ. 12.- Հռոմի Փանթեոնը. յատակագիծին վերլուծումը՝ ներդաշնակ գիծով:





$$\frac{UR}{FR} = \frac{UR}{UR} = \sqrt{2} = 1.44$$


Պատկ. 13.- Զուարթնոց եկեղեցին: Ցառակագիծին վերլուծումը համապատասխան է հայկական ներդաշնակության յայտարարին՝ Vշին: Այս վերլուծումը կը համապատասխանե՛ St. Etienne le Rondի վերլուծումին (ե. դար):



Պատկ. 14.- Mongerի տախտակներէն թիւ 29. Հոմէական շրթի մը յօթնու-
ժական վերլուծումը եւ ներդաշնակ գիծը: Շինութեան տրամաբանական
ընթացքը միեւնոյնն է Հովիտի եկեղեցիին հետ:



Պատկ. 15.- Հովիտի եկեղեցիին սիւներուն եւ քիւի ուրուագիծները:



Պտկ. 16.- Հովիտի եկեղեցիին ներքին որմամույթերու հատածը :

Եկեղեցիին բուն կմախքը կը կազմէ երեք հարթութիւններու (niveau) վրայ բարձրացած կլոր շինուածք մը, որուն գետնայարկը ծածկուած է վեց աղեղներէ բոնուած սալաքարով (dalle) մը։ Այս աղեղները՝ մէկ կողմէն իրենց յենարան ունին գետնայարկի կլոր պատը, եւ միւս կողմէն՝ իրարու կոթնելով՝ չէնքին կեդրոնին վրայ կը ձեւացնեն առկախ կամարաքար մը։

Ուրեմն՝ յատակագրիծին հիմքը կը կազմէ կլորակ պատ մը, ներքին վեց որմասիւններով (Պատիկ. 8ա), որոնց վրայ կու գան յենուկ վեց աղեղները:

Որպէսզի այս աղեղներուն դէպի դուրս մղիչ ոյժը չէզոքացուի եւ հաւասարակշռուի, պէտք է որ պատը որոշ հաստութիւն մը ունենայ, եւ իր ծանրութեամբ հաւասարակշռէ աղեղներու մղիչ ոյժը:

Ծէնքը Հաւասարակշռութիւն Համար, պէտք է որ այս երկու Հակադրեցիկ ոյժերէն (որմին ծանրութիւնը եւ աղեղներու մղիչ ոյժը) առաջացող երրորդ ոյժը (résultante) իյնայ որմին խաբիսիին կեդրոնական 1/3րդ մասին մէջ: Այս պահանջը կը դրահանէ որմին Հաստութիւնը (յայնք) եւ երկարութիւնը (Պատկ. 7):

Ներքին երկու որմասիւներու միջեւ փշած հեռաւորութիւնները աւելի են՝ քան պատին հաւասարակշռումին համար պէտք եղած երկայնութիւնը :

Ուրեմն, կարելի է՝ շինութիւնը թեթեւցնելու համար՝ կմախքին
կոոր պատէն պարպել մասեր (Պատկ. 8բ)։ Ինչ որ Հովիւի եկեղե-
ցիին ճարտարապետը ըրեր է՝ շէնքին ներսէն պարպելով պատերը,
եւ ստացեր է վեց խորանանման եռանկիւնի խորշեր, որոնք յատա-
կադիծին ներքին մասին տուած են վեցթեւեան աստղի մը երեւոյթը։

Բայց այս տրամաբանութեան համեմատ՝ կարելի է նաեւ նոյն աշխատութիւնը ընել արտաքին ճակատին կողմէն, միշտ նկատի ունենալով պահպանել՝ աղեղներու իջած մասերուն վրայ՝ պատին հաստութիւնը, որպէսզի գործող ոյժերու համագումարը (résultante), պատին խարխախին կեդրոնական $\frac{1}{3}$ ին մէջը մնայ:

Այս պատճառով՝ ճարտարապետը ստիպվեւեր է, փոխանակ արտաքին վեց մեծ խորշերու, աւելի փոքր խորշեր բանալ՝ ոյժին ուղղութեան երկու կողմերը: Այս ընելով՝ ան ստացեր է տասներկու փոքր խորշեր: Ասոնք ձեւացուցեր են յատակագիծին արտաքին մասին տասներկուութեան աստղը (Պատկ. 8գ), որ կը թեթեւցնէ պատերու կերպարը՝ առանց անոնց հաւասարակշռութեան վտանգելու:

Հանճարեղ ճարտարապետը որմը թեթեցնելով հանդերձ՝ ստացեր է հաճելի եւ ինքնատիպ յատակադիժ մը :

Պէտք է նկատի ունենալ սա իրողութիւնը թէ՛ այդ դարերուն, ճարտարապետը չէր գիտեր կշռականութեան (statique) նորին հաշիւներն ընել, ինչպէս վերը փորձեցի ներկայացնել: Ան փ՛առաջնոր-

Նկատել որ նա լայնքը՝ որ կու տայ վերնատան տրամագիծը, կը համեմատի ԱՔ խաբիսին՝

$$66 = 6'6'' = Աէ = Բէ' = \frac{ԱՔ}{1.618} = 0,618 ԱՔ$$

Իսկ 6'6' կու տայ կաթողիկէին տրամագիծը որ կը համեմատի ԱՔ խաբիսին՝

$$00 = 6'6' = Աէ' = Բէ = \frac{1}{2 \sqrt{2}} \times ԱՔ = 0,36 ԱՔ^{17}$$

Հովիւի եկեղեցին աստղաձեւ շէնքերու շարքին կը պատկանի, իսկ այդ շարքը մէկ ճիւղն է բաղմանկիւնի շինութիւններու դասին: Այս տեսակէտէն՝ ան վը շարուի իրմէ առաջ արդէն գոյութիւն ունեցող բաղմանկիւնի եւ աստղաձեւ շինութիւններու կարգին մէջ:

Բաղմանկիւն, կլոր եւ աստղաձեւ շինութիւնները արդէն ծանօթ էին նախ քան Քրիստոս՝ Հելլենական շրջանին, թէեւ անոնք շատ գործածուած չեն Ելլադայի մէջ: Պաւսանիաս կը յիշէ հաղիւ վեց օրինակներ, որոնց վրայ պէտք է աւելցնել Անդրոնիկոս Քերեսէսի Աթէնքի հողմացոյց աշտարակը (Պատկ. 11), շինուած Ա. դարուն (Ն. Ք.): Այս շէնքին տանիքին շինութեան գիտարուեստին տկճը բունքը կը յիշեցնէ Հովիւի եկեղեցիին ներքին կեդրոնաձիգ կամարները: Արդարեւ՝ այս շէնքին տանիքը կազմող քսանեւէորս մարմարէ տախտակները, մէկ կողմէն՝ շրջապատի որմերուն կը կոթնին, եւ միւս կողմէն՝ իրարու յեցած՝ վեր կը բռնեն շէնքին կեդրոնին զետեղուած կամարակապ քարի նման գունդ մը:

Հելլենական այս ձեւ շէնքերու ցանկին վրայ պէտք է աւելցնել նաեւ՝ վերածնունդի ճարտարապետ Սանկալլոյի յիշած կլոր տաճարն ալ, նուիրուած Ապոլլոնի՝ Դելֆիսի մէջ:

Հռոմայեցիները թողնւն են կլոր, բաղմանկիւն եւ աստղաձեւ շէնքերու բաղմաթիւ եւ այլազան օրինակներ, որոնք արդէն ծանօթ են: Յիշենք անոնց մէջէն միայն ամէնէն կարեւորը եւ չքեղը, Հռոմի Փանթէոնը (Պատկ. 12):

Արդէն Վիտրուվիոս՝ Քրիստոսէ առաջ Ա. դարու երկրորդ կէ-

17. Ս. ՃԵՎԱՀԻՐԵԱՆ, Հայկական ճարտարապետութեան մէջ՝ մերձաշնակութեան կամոմաներու պրպտումի փորձեր, «Բաղմալէպ» ձեւ (1947), Թ. 5-6 (էջ 108-114), Թ. 7-8 (էջ 169-173), Թ. 9-10 (էջ 227-234), ձգ (1948), Թ. 1-2 (էջ 22-25), Թ. 7-8 (էջ 172-177), Թ. 9-10 (էջ 222-228):

տին՝ կը խօսի կլոր շէնքերու մասին եւ անոնց կառուցումին համեմատութիւնները կու տայ¹⁸:

Հռոմէական շինութիւններուն մէջ վարելի է երկու տարբերակներ բնորոշել: Ասոնց առաջինին մէջ՝ գմբէթին մղիչ ոյժը կը հաւասարակշռուի շրջապատի զանգուածային որմերու ծանրութեամբը, իսկ երկրորդին մէջ՝ գմբէթին մղիչ ոյժը կը տարբադարձուի եւ կը բաժնուի զանազան ուղղութիւններու, որոնց համապատասխան՝ շինութեան որոշ կէտերուն վրայ՝ Թանձր որմակոյտեր իրենց զանգուածային կառուցուածքի ծանրութեամբը կը հաւասարակշռեն գմբէթը: Այս զանգուածային որմակոյտերու միջեւ ինկած որմի մասերը կարելի է ըլլայ խորանաձեւ խորշերով թեթեւցնել, ինչ որ կու տայ շէնքին աստղաձեւ երեւոյթ մը: Այս երկրորդ տարբերակը կը համապատասխանէ Հովիւի եկեղեցիին շինութեան գիտարուեստին:

Հռոմէական խորշերը միշտ խորանաձեւ են, մինչ հայկականները՝ միշտ եռանկիւնի, ինչ որ մեր տոհմային ոճին մէկ յայտարարն է:

Այս երկրորդ տարբերակի շինուածաձեւն է որ թոյլ տուաւ ջլաւոր ճառագայթաձեւ շինութիւններու իրականացումը:

Հռոմէական այս երկու տարբերակներու համապատասխան շինութիւններ կը գտնուին նաեւ Հայաստանի մէջ:

Շինուածքի կազմական տեսակէտէն՝ Հովիւի եկեղեցին կը համապատասխանէ Հելլենա-Հռոմէական կերպարին երկրորդ տարբերակին, որուն մէկ օրինակը կու տայ Վերածնունդի վարպետներէն Մոնտերի¹⁹, հռոմէական շիրիմներու հաւաքածոյին թիւ 29 տախտակով (Պատկ. 14), որուն ներդաշնակ գիծը վարելի է բաղդատել Հովիւի եկեղեցիին հետ:

Ե. դարուն (Յ. Ք.) հայ ճարտարապետ մը՝ Դանիէլ շինած է Ռաւեննայի մէջ, Ռատրոկոթներու Թաղաւոր՝ Թէոդորիկոսի շիրիմը (mausolée), բաղմանկիւնի եւ երկայարկ: Այս շիրիմին գետնայարկը կը կտնուի Թէոդորիկոսի գերեզմանը, իսկ առաջին յարկը եկեղեցի է: Դանիէլ՝ այս շէնքը ծածկեց միակտուր քարէ տաշուած գմբէթով մը, որ հաւասարակշռական շատ մը հոյեր իրեն խնայեց:

Կլոր եւ աստղաձեւ շինութիւններու տկճրունքը, ուրեմն, հայկական ճարտարապետութեան մէջ օտարամուտ է: Ան՝ Հելլենա-Հռոմէական ժառանգութիւն մըն է՝ ճարտարօրէն հայացուած, անոր ծագու-

18. VITRUVIUS POLLIO, De Architectura, IV, c. 4 (Paris, éd. C. L. F. Panckoucke, 1847, pg. 371):

19. MONGERI, Le rovine di Roma, tavola n° 29, Roma.

մին աղբիւրը անճանաչելի ընելու աստիճան²⁰։ Հայացումը այնքան խոր է, եռանկիւն խորշերով, հայկական ինքնատիպ կաթողիկէով, նրբին որմնասիւններու շարքերով, քանդակազարդ տոհմիկ գծադրութիւններով, քիւերու ինքնատիպ գծուածքով եւ մանաւանդ ներդաշնակութեան զուտ հայկական $\sqrt{2}$ յայտարարովը, որ՝ հելլէնա-հռոմէական մտածումը՝ հոն բոլորովին հայացած եւ եղած է հայկական զուտ յղացում մը, եւ մաս կը կազմէ՝ անժխտելի կերպով՝ հայկական ճարտարապետութեան։

Հովիւի եկեղեցիին յատակագիծը և ընդհանուր կերպարը՝ իր ամբողջութեանը մէջ՝ կարելի է ըսել թէ ծնունդ է հայկական շինարուեստին։ Արդարեւ, ճարտարապետութեան պատմութեան մէջ, եզակի պարագայ մը կայ՝ որ վրիպած է այս խնդրով զբաղող օտար մասնագէտներու ուշադրութենէն, եւ որ կը յատակագիծերու մասին գոյութիւն ունեցող կարծիքը բոլորովին կրնայ յեղաշրջել։

Արդարեւ՝ Հայաստանի մէջ, Հռոմոս գիւղին հիւսիս-արեւելքը գտնուող բլուրի մը վրայ կը գտնուին մեծաքարային (megalithique) շրջանէն մնացած կառուցումի մը աւերակները, բաղկացած անտաշ հակայ քարերէ։ Այս աւերակները պեղումներով բոլորովին ի յայտ չեն հանուած տակաւին, բայց անոնց ընդհանուր դասակարգումը եւ տեսքը կը յայտնէ «ճառագայթաձեւ» յատակագիծ մը (plan rayonnant), որուն շրջագիծէն դուրս կու գան կիսաբոլորակ խորաններ։

Ըստ Թ. Թորամանեանի²¹, որ առաջին անգամ ըլլալով այդ շէնքին գոյութիւնը յայտնեց, այդ աւերակները պէտք են ըլլալ Ժ-Ը դարերուն (Ն. Բ.) կառուցուած տաճարի մը մնացորդները։

Այս շէնքը, ուրեմն, եզակի օրինակ մըն է՝ յիշուած դարերուն համար, որովհետեւ «ճառագայթաձեւ» յատակագիծով շինութիւնները ընդհանրապէս ծանօթ են հռոմէական շրջանէն, որոնց ամենահին օրինակը Բ. դարէն (յ. Բ.) աւելի հեռու չ'երթար։

Հռոմոսի գիւղին այս շէնքին եւ հռոմէական այդ ձեւի շինութիւններուն միջեւ, ուրեմն, հազար տարուան տարբերութիւն մը կայ, հնութեան առաւելութիւնը հայկականին պատկանելով։ Մին՝ նախնական մեծաքարային կառուցուածք մը, մինչ հռոմէականը՝ ճարտարապետական կատարելագործութիւն մը։ Բայց կը մնայ շինուածաձեւին առաջնորդող գաղափարը, որ նախ քան հելլէնա-հռոմէացիք, իրագործուել է դարեր առաջ։ Բնական է դարէ դար անոր շին-

20. Թ. Թորամանեան կը գրէ՝ Հովիւի եկեղեցիին մասին. «Եւրոպական ձեւեր եւ արտաքին ակնահամոյ տեսքը մէկ հատիկ օրինակը կը թուի ինծի ամբողջ պատմական ճարտարապետութեան մէջ» (Յիշ գրծ. էջ 388). արդ՝ տեսնե՞ք որ այս յիշատակարանը կը սեռի հելլէն-հռոմէական մայր յատակագիծէ մը։

21. ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆԵԱՆ, Նիւք-Եր հայկական ճարտարապետութեան, հտ. Բ., Երեւան 1948, էջ 12-21։

նութիւնը կատարելագործուել է՝ շինարուեստին կատարելագործուելուն գոգընթաց։ Նախ քան Քրիստոս Ժ. դարուն Հայաստանի մէջ մեծաքարային շինարուեստով, Քրիստոսէ վերջ Բ. դարուն՝ Հռոմի մէջ, սրբատաշ քարերով եւ շաղախով։

ՀԱՆՃԱՐԵՂ ԳԻՏԱՐՈՒԵՍ

Հովիւի եկեղեցին ինքն իրեն արդէն զարդ մըն է եւ պէտք չունի ճարտարապետական ուրիշ զարդերու, որովհետեւ հոն չկան տափաբակ մերկ պատեր, որպէսզի որմին մերկութիւնը հազուացնէին քանդակազարդերով։

Այս յիշատակարանին ճարտարապետը մեծ ճաշակ եւ իմաստութիւն ունեցեր է միմիայն Ժ. դարու Անիի ոճին նուրբ որմասիւններովը զարդարելու պատերու սրածայր անկիւնները, թէ՛ դուրսի կողմէն եւ թէ՛ ներսէն։

Եւ որովհետեւ շէնքին կազմական յղացումը՝ ծանրութիւնները կը դնէ ուղղակի պատերու խոշոր զանգուածներուն վրայ, այս որմասիւնները գործածուած են որպէս զարդասիւններ, եւ այդ պատճառով ալ նուրբ կերտուածք մը կըրցած են ունենալ, ազատ՝ որեւէ կազմական պաշտօնէ։

Արտաքին զարդասիւններու խոյակները եւ խարիսխները կազմուած են բազմանկիւնի դարեւանդի մը (imposte) տակ դրուած՝ ուռուցիկ (bulbeux)²² խոյակէ մը (Պատկ. 15ա), առանց որեւէ քանդակազարդի։ Իսկ ներքին զարդասիւնները՝ դարեւանդին տակ կը ներկայացնեն՝ հակառակ գծադրութեամբ մը մշակուած խոյակներ (tailloir) (Պատկ. 15բ)։

Անպաճոյճ շինելու այս ձեւը մեծապէս կը սատարէ ճարտարապետական ամբողջութեան ներդաշնակութեան, աչքին ուշադրութիւնը ամբողջութեան վրայ միայն կեդրոնացնելով։

Շէնքին մէկ ուրիշ պարզ զարդարանքը կը կազմեն քիւերը (պսակ. corniche)։

Հայկական ճարտարապետութեան մէջ, քիւերը քաղմատեսակ ձեւափոխութիւններու ենթարկուած են։ Ասոնցմէ մին, որ ամէնէն հին շրջանին մէջ գործածուած է, Ե-Է. դարերուն, կը տեսնուի Պողոնի, Մրենի, Թալինի եւ Մաստարայի եկեղեցիներուն վրայ։ Այս քիւը կազմուած է մէկ կամ քանի մը ճարտարապետական գիծերով խառնուած ատամնաշարքերու (denticules) ձեւով, Պերսեպոլեան համալսարանի շինութեամբ²². հոն՝ ատամները երբեմն կիսաբոլորակ կ'ըլլան,

22. ՆՈՅՆ, յիշ. գրծ. էջ 48։

մերթ քառակուսի եւ երբեմն ալ առարկաներու պատկերներու վերածուած, ինչպէս է Պտղոմէոսի մէջ:

Միւս տեսակ ջրերը միաժամանակ հաւասարապէս գործածուած են է-ԺԱ. դարերուն: Ասոնցմէ մէկը կը ներկայացնէ նեղ ճակատի մը յաջորդող քառորդ բոլորակի խողովակ մը (Պատկ. 15գ). այդ օրինակէն կը տեսնուին Թալինի Ս. Աստուածածնի, Տեկորի, Ալամի, Անիի Ս. Առաքելոցի վրայ եւ նաեւ Հովիւի եկեղեցիին վրայ: Հոս, գետնայարկի քիւր կը բոլորէ տանիքը՝ պարզ հորիզոնական զլծով մը, ինչ որ չի ծանրացներ տասներկուութեան որմին տեսքը: Իսկ վերնատան տանիքի քիւր՝ բեկեալ գլծ մը կը ներկայացնէ, վեցանկիւնին մերկ որմը շեշտելով:

Շինութեան արուեստի տեսակէտով՝ Հովիւի եկեղեցին կը բխի իսկական հայկական գիտարուեստէն: Անոր որմերուն վաղմութիւնը, կրաշաղախէ «պեթոն»ին բաղադրութիւնը եւ գործածութիւնը՝ հայկական շինութեամբներէն կը համապատասխանեն:

Ճարտարապետական ոճերը՝ առաւելապէս շինութեան լին ընձեռած կարելիութիւններուն ծնունդն են եղած, պատմական դարերուն մէջ, երբ դասական ոճերը կը ձեւաւորուէին:

Հայաստան, որ քարի զանազան տեսակներով օժտուած երկիր մըն է, սկիզբէն իսկ գործածեց իր հարուստ քարահանքերը:

Հայաստանի մէջ, քարագործը եղաւ թէ՛ քարտաշ, թէ՛ հիւսն, թէ՛ որմնադիր եւ թէ՛ քանդակագործ, այսինքն՝ իսկական ճարտարապետ: Արդէն հայ մատենագիրները շատ լաւ կ'արտայայտեն այս պարագան՝ գործածելով «ճարտարապետ ի քարս» ասութիւնը, որ կը համապատասխանէ՝ Եւրոպայի մէջ, աւելի ուշ, միջին դարուն գործածուած «Magister lapidum» ասութեան:

Քարագործ հայ ճարտարապետը իր արհեստին բերումով՝ խորշանք մը ունեցած է, կարծէք, փայտաշէն եւ աղիւսաշէն կառուցումներէն, եւ ջանացած է այդ նիւթերուն գործածութենէն խուսափել՝ իր վանդնած յուշարձաններու շինութեան համար: Ան իր շինանիւթին՝ «քար»ին յատկութիւններուն եւ կարելիութիւններուն կատարելապէս տիրացած, գտած է ճարտարապետական փափուկ խնդիրներուն՝ քարաշէն ափսխի լուծումներ, որոնց շնորհիւ ան ստեղծած է «քարի ճարտարապետութիւն» մը, որ եղած է հայկական ճարտարապետական ոճը, ինքնատիպ՝ իր հիմնական զլծերուն մէջ. կաթողիկէ կոնստանտնիքը, պայտածեւ (outrepassé) եւ սրախուղց աղեղները, կրկնակ աղեղները (arcs doubleaux), աղեղախորձերը (croisées d'ogives), ջիւերը (nervures) եւ կամարները եղած են «քարի ճարտարապետութեան» արդիւնքները: Ասոնք դարերու ընթացքին արեւմուտք անցնելով, Եւրոպայի նորաստեղծ ոճերուն՝ Ռոման եւ Գոթական ճարտարապետութիւններուն փառքերը կազմեցին:

Հայաստան հարուստ է զանազան քարերու տեսակներով. կան կրաքարերը՝ որոնց գեղեցկագոյնը Հայաստանի մարմարիոնն է, աւաղաքարերը (Mollasse), Պաղաթ քարերը եւ մասնաւորաբար հրաբխային զանազան գոյնի տուֆ քարերը տուած են շինութեան լին ընձեռած առատ զանազանութիւններ:

Նախապատմական շրջանի կիկլոպեան հնաքարային որմերը կազմուած էին քիչ տաշուած քով՝ հսկայ սալաքարերէ, անշաղախ՝ իրարու վրայ շարուած, 2.50-5.00 մեզր հաստութեամբ: Այս անտաշ քարերու գէղեցկութիւնն մէջ մնացած խոռոչները եւ պարապութիւնները կը լեցուէին քարի փոքր կտորներով եւ հողով:

Ուրարտացիները երկաթէ իրենց գործիքներով յաջողած են այս քարերը աւելի լաւ տաշել, զանոնք իրարու աւելի լաւ յարմարեցնել եւ իրարու զօղել: Այսպէս ստացուած են աւելի միաձոյլ որմեր: Աւելի վերջ՝ որմերու քարերը իրարու կապեցին երկաթէ կամ կապարէ «միջուկ» կապերով²³:

Որքան ատեն որ շաղախի գործածութիւնը Հայաստան չէր ներմուծուած, որմագործութիւնը ջանացած է լաւագոյն յղկուած քարեր ստանալ, անոնցմով յաջողութեամբ հիւսելու համար որմերը: Այսպէս շինութեամբ որմերը միշտ զանգուածային հաստութիւն մը ունեցած են՝ թէպէտ անոնց քարերը աւելի փոքր տաշուած էին:

Շաղախի գործածութեան մուտքը՝ Պարսկաստանէն, Ուրարտական շրջանին վերջաւորութեան, փոխած է որմագործութեան գիտարուեստը:

Շաղախը կը ստացուի կիրի եւ աւաղի խառնուրդով: Կիրը՝ կը ստացուի կրաքարին մասնաւոր հնոցներու մէջ ալրելովը, մինչեւ որ ան փոշիի վերածուի: Շաղախին որակը կախում ունի գործածուած կիրին՝ թոյլ կամ պարարտ տեսակէն եւ անոր մէջ խառնուած աւաղին համեմատութեան: Այս համեմատութիւնը՝ հայկական ճարտարապետութեան մէջ՝ կիրի ծաւալին 2½ չափն է: Միայն Զուարթնոցի մէջ՝ տեղ մը կը տեսնուի, կիրի ծաւալին 3 չափ աւաղի գործածութիւն մը, ըստ բիւզանդական գիտարուեստին²⁴:

Կիրով պատրաստուած շաղախը կը կոչուի կրաշաղախ: Հայաստանի մէջ, երկու տեսակ շաղախ կը գործածէին. մին՝ որմերը ծեփելու համար, միւսը՝ որմ հիւսելու համար եւ կը կոչուէր «հիւսի շաղախ»:

23. Ժ. զարուն՝ Թովմա Արծրունին, Վասպուրականի թագաւոր Գագիկ Արծրունիի պալատին շինութիւնը նկարագրելու ատեն կը յիշատակէ թէ հոն գործածուած է 200.000 լիտր երկաթ (Պատմութիւն Տաւր Արծրունեաց, տպ. Կ. Պոլիս 1852, էջ 333):

24. ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆԵԱՆ, Շինանիւթեր եւ ճրագ գործածութեան կերպը հին Հայաստանում, Երեւան 1932, էջ 24:

Հայ հիւսիս շատ յաջող կերպով գործածած է կիրը, եւ անոր մէջ աւելցուցած աւաղը՝ գետի աւաղ է, լուացուած եւ մաքուր հողի մասնիկներէ գերծ: Այս շաղախը տակաւին անեղծ կը մնայ, դարեր վերջն ալ:

Կիրին որակը՝ իր մէջ պարունակած կաւի (argile) քանակէն կախում ունի: Ընդհանրապէս՝ կաւի համեմատութիւնը 30-35% է, աւելի չէ: Եթէ այս համեմատութիւնը արուեստական միջոցով մը աւելցուի՝ 70-80%ի, կիրին պատրաստութեան ժամանակ, կիրը կը վերածուի «կրակաւ» (ciment): Այս պատրաստութիւնը կը ստացուի շատ բարձր ջերմութեան մը տակ՝ կրաքարը եւ կաւը միատեղ ալրելով եւ փոշիի վերածելով:

Բիւզանդացիները՝ յաճախ իրենց գործածած կիրին որակը բարձրացնելու համար, շաղախին մէջ կ'աւելցնէին կաւէ եփած աղիւսի նուրբ փոշին, անուղղակի կերպով կաւի համեմատութիւնը կիրին մէջ աւելցնելու մտադրութեամբ: Հայ ճարտարապետը, որ աղիւսի գործածութիւն չունէր, այդ բանը չէր կրնար ընել. իսկ Հայաստանի լեռներու կրաքարին որակը արդէն բարձր ըլլալով, կու տար հարուստ եւ բաւ կիր մը:

Շաղախով որմադրութեան մէջ գերազանցաբար գործածուեցան տուֆ քարերը, որոնք շատ կը յարմարին կրաշաղախին եւ սերտօրէն կը միանան անոր, եւ կը կազմեն միակտուր զանդուածք մը:

Նախ՝ համեմատաբար բարակ հաստութեամբ սրբատաշ տուֆ քարերով կը վառուցանէին սլատին երկու երեսները եւ ապա՝ այդ երկու երեսներուն միջեւ մնացած պարապ անջրպետը կը լեցնէին կրաշաղախով պատրաստուած «պեթոն»ով մը, որ կը կազմէր որմին «ծուծ»ը (noyau): «Պեթոն»ը՝ շաղախի եւ խիճերու կամ փոքր քարի կտորներու խառնուրդն է: Ասկէ հազար տարի առաջ, արդէն Հայերը «պեթոն» կամ խճաշաղախ կը պատրաստէին:

Այսպէս կառուցուած շէնքին մէջ, կազմական դերը որմին «ծուծ»ը կը կատարէր, իսկ որմին փրեսները կազմող տուֆը, մըթնոլորտի անբարեխառնութիւններուն դէմ «ծուծ»ը պաշտպանելու կը ծառայէր, եւ միեւնոյն ատեն կու տար քանդակագործութեան յարմար նիւթ մը: Տուֆը՝ օդին ազդեցութեան տակ ջրատելով (hydrater)՝ կը վարժրանայ, եւ ժամանակի ընթացքին աւելի տոկուն կը դառնայ:

Եւ որովհետեւ շէնքին ամբողջ ծանրութիւնը ծուծն է որ պիտի վերցնէ, գալն թաւական հաստ կը չինէին: Ընդհանրապէս անոր հաստութիւնը ուրարտական կանդունէն (51-52 հարիւրորդամեդր) վար չէր ըլլար, իսկ տուֆէ իւրաքանչիւր երեսներուն հաստութիւնը՝ կէս կանդունը չէր անցներ: Ասոր համար է որ հայկական շէնքերու որ-

մերու հաստութիւնները ընդհանրապէս 0.90-1.05 մեդր եղած են՝ նուազագոյնը:

Ահա՛ որմաշինական այս դիտարկումսով է շինուած հազարամեայ Հովիւի եկեղեցին: Ասերածու ձեռքերու եւ բնութեան փորձանարար ազդեցութիւններուն դիմաց՝ անոր կիսաւեր երեւոյթը ցոյց կու տայ հայկական շինարուեստի դրութիւնը, ծուծի պեթոնը, տուֆ քարէ ճակատներուն շարուածքը եւ անոնց զարդարումի ձեւը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հովիւի եկեղեցին, հայկական ճարտարապետութեան գոհարը, այժմ կիսակործան վիճակի մէջ է: Բնութեան տարրերուն՝ անձրեւին, հովերու եւ փոթորիկներու անխնայ հարուածներուն ենթակայ, օրէ օր՝ անիկա բան մը, մասնիկ մը կը կորսնցնէ իր գեղեցկութենէն, հովերուն յանձնուած:

Փոքրիկ կաթողիկէին հիւսիս-արեւմտեան մէկ մասը տակաւին կանգուն է՝ իր կոնաձեւ ծածքովը: Վերնատունէն մնացած է արեւելեան պատը՝ իր սրբատաշ քարերովը. իսկ գետնայարկը՝ հիւսիսային կողմէն՝ կը պահէ տակաւին քանի մը կամարախորշեր, որմի մասերով, բայց շատ վնասուած վիճակի մէջ: Արեւելեան կողմը՝ հարաւային դրան մօտի սիւներէն ակսեալ բոլորովին փլած է:

Ներկայ վիճակին մէջ, այս սքանչելի շէնքին ամբողջական կործանումը մօտայայտ է:

Հովիւի եկեղեցին շուրջ, շինութեան որեւէ ուրիշ հետքեր չեն մնացած, ամէն բան անյայտացած է: Հաւանաբար, մօտակայ թուրք եւ քիւրտ գիւղացիները՝ ինկած եւ կամ շէնքէն փրցուած քարերը մէկ առ մէկ տարած են, իրենց բնակարանները շինելու համար: Այժմ չըջակայքը վարուցանքի դաշտ է եղած, ուր ցորեն եւ գարի կը մշակեն տեղացի գիւղացիները, առանց անդրադառնալու՝ թէ հոն բարձր գեղարուեստական արժէքով յիշատակարան մը կայ, կործանելու մօտ:

Հայկական մշակոյթին համար մեծ եւ անփոխարինելի կորուստ մը պիտի ըլլայ Հովիւի եկեղեցին վերջնական եւ ամբողջական փլուզումը: Հայկական մշակոյթը անով պիտի կորսնցնէ դարերու մէջէն եկած վաւերական վկայ մը՝ իր հրաշալի եւ բարձր զարգացումին:

Ժըմեւ, Դեկտ. 1974

ՃՐՏ. Ս. ՃԵՎԱՀԻՐԵԱՆ

Résumé

L'EGLISE DU BERGER D'ANI

(Ing. S. DJEVAHIRDJIAN)

Grâce à ses nombreux articles parus surtout dans «Bazmavēp» depuis 1940, l'A. est bien connu dans le domaine des études de l'architecture arménienne médiévale. Sa présente recherche est consacrée à la très célèbre «Eglise du Berger» à Ani, capitale du royaume arménien des Bagratides; il l'examine dans ses composantes topographiques, historiques, statiques et artistiques, attachant une attention particulière aux propriétés structurales de l'édifice.

L'église du Berger, actuellement dans un état désolant de ruine, est construite hors des remparts d'Ani, à une distance de 1500 m. environ, au nord de la Porte Majeure, probablement vers la fin du X^e siècle. La tradition en attribue la construction à un berger, auquel était interdit, en raison de son appartenance sociale, l'accès aux églises de la ville, réservées à la noblesse.

Bien qu'inspirée en partie de la construction plus ancienne de l'église Gagkašēn, située à l'intérieur de l'enceinte de la ville, l'église du Berger présente des différences considérables par rapport au style arménien traditionnel, en particulier dans ses structures internes.

Il s'agit, en réalité, d'un édifice de modestes dimensions: une petite chapelle à trois étages, de 11 m. de haut, s'élevant sur une plateforme ronde à deux gradins, ayant un diamètre de 7 m. Le rez-de-chaussée, à forme d'étoile, se présente à l'extérieur avec douze et à l'intérieur avec six niches. Il a une hauteur de 5 m. Le premier étage, hexagonal à l'extérieur et circulaire à l'intérieur, s'élève à une hauteur de 3 m. L'étage supérieur constitue une tourelle coiffée d'un toit conique.

L'A. passe ensuite à la description minutieuse de l'intérieur où il considère successivement la simplicité des murs de l'hexagone inférieur, les traces de l'escalier en bois conduisant à l'étage supérieur, les fenêtres, les absides, les clefs de voûte et la naissance des arcs, la taille très régulière des pierres, la composition du ciment, le noyau.

Il fait ensuite une analyse comparative des édifices ronds étoilés, connus depuis l'époque hellénistique (Athènes, Delphis, Rome, Ravenne). La comparaison la plus intéressante est celle avec le temple païen remontant aux X^e-VIII^e siècles av. J.C., découvert en Arménie, au nord-ouest du village Horomos, par l'architecte T'oramanean.

La dernière partie de l'étude est consacrée à l'analyse des éléments décoratifs. L'article s'achève par un triste épilogue où l'A. déplore le manque absolu d'intérêt pour la conservation de ce qui reste en état si précaire de ce monument exceptionnel menacé de ruine totale, et dont la perte serait irremplaçable non seulement pour la culture arménienne, mais pour la civilisation humaine en tant que telle.

Հ. ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ

ՏԵՍՈՒՋ ՓԱՐԻՋԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

(Շաբ. տե'ս «Բազմավեպ» 1976, ք. 3-4, էջ 316-340)

ՀԱՆԴԵՍՆԵՐ ԵՒ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

Աշակերտներու դաստիարակութեան եւ կրթութեան մեծապէս կը նպաստեն վարժարանէն ներս սարքուած հանդէսները, ըլլա՛ն անոնք ուսումնական տարւոյն բացման կամ փակումին, ըլլան նաեւ ուրիշ ոգեկոչումներ՝ կատարուած այլազան առիթներով: Թուենք կարգով այն տօնակատարութիւնները կամ հաւաքոյթները՝ որոնք տեղի ունեցած են 1858-1861 տարիներու ընթացքին, Փարիզի Մուրատեան վարժարանին մէջ, ի ներկայութեան Ալիշանի:

1. — Վերեւ տեսանք արդէն, թէ 1858 տարւոյն վերջին ամիսներուն՝ որքան ծանր էր տեսուչ Հ. Ռաֆայէլի առողջական վիճակը, ու Ալիշան խոհեմութիւն չէր համարեր կատարել ուսումնական տարւոյն փակումի հանդէսը. «վասն այսպիսի դիպուածոց եւ կրից ոչ կամեցաք կատարել այժմ զհանդէս պարգեւաբաշխութեան մանկրտւոյն, այլ թողցի յետ դիւղական պարապմանց. բայց յառաջիկայ կիւրակէիս փոքու հանդիսի կատարեսցուք զհրաժեշտ յուղարկելի մանկանց»⁷⁶, եւ իրապէս, շրջանաւարտ հինգ աշակերտներու մեկնեալէն առաջ⁷⁷, կը վատարուի վարժարանի դահլիճին մէջ ներքին «փոքր

76. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 16 Օգոստ. 1858, առ Աբբահայրն Գէորգ Հիւրժիւզեան, վենետիկ. նախապէս գրած էր Ալիշան. «Եթէ երեսնացի նշան օրըստօրեայ լաւութեան՝ արասցուք զպարգեւաբաշխութեան հանդէս, ապա թէ ոչ՝ չկամիք եւ չկամիմք վիսահար սրտիւ առնել, բայց եթէ չափաւոր ինչ եւ ընտանեկան՝ ի շնորհս ուղեւոր մանկանց», (8 Օգոստ. 1858, առ Աբբահայրն Գ. Հիւրժիւզեան):

77. Շրջանաւարտ աշակերտներէն Յովհաննէս Պոյաճեանի մահուան մասին, յաջորդ տարիներու նամակներու մէջ, Ալիշան կու տայ հետեւեալ ծանօթութիւնը. «վատթարութիւն Պոլսոյ իրաց վատթարացոյց եւ զգործս վաճառականաց տեղ-